# ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ...

(Ն ի կ ի տ ի ն ի ց)

---

Դանդաղ սահում են օրեր, տարիներ,—
Պահի՛ր յոյս, հաւաս սրտիդ խորքերում...
Անի՛ր, նո՛ր սերունդ, անվախ, աներեր,
Լա՜յն է քո ուղին գալիք օրերում:
Ահա՛ մեզ շողաց փայլակ լուսաւոր.
Նայէ՛ք, մենք համբի ծայրին ենք կանգնած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ցանւում էր սերմը կեանքում դարէդար,—
Խորո՜ւնկ է հողում նա արմատ ձրգել.
Կացնով կարող ես կըտրատել անտառ,—
Բայց չարն արմատով դրժուար է պոկել.
Եւ մեր պապերը այդ չարին սովոր,
Մանուկ օրից են մեզ ա՛յն պատուաստած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ամո՜թ, ով անխել տըխրում է, ցաւում,
Տեսե՛ք խըճճալիս—համրին է նըման.
Փա՜ռք, ով ճշմարտին սիրով ծառայում,
Նրա՛ն է կեանքում զոհում ամեն բան:

Մենք ո՛ւր աչք բացինք, ո՛ւր տեսանք լոյս or.
Դէ՛հ, փութա՞նք գործի միաձուռնչ խմբուած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Շո՛ւտ արէք, հողն է պատրաստ ու բերրի,
Սերմանէ՛ք, ճանի փայլում է գարուն.
Շահաւէտ խօսքի, բարի գործերի
Չէ՛ կորչում ցանած սերմը ապարդիւն:
Մենք հաշիւ կը տանք թոռներին մի or—
Ո՞ւր եւ ի՞նչպէս ենք այդ սերմը ճարած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

---